ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2023թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
1-ԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 10-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը (կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N632-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
7. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
8. «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
9. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:
10. Գույք նվիրաբերելու մասին:
11. Երևան քաղաքում Սվետլանա Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
12. Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
13. Երևան քաղաքում Ժիրայր Անանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
14. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
15. 2009 թվականից մինչև 2017 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական արխիվային սեփականության փոխանցելու մասին: